ՏԱՒՂ

Ա. Պրիւսի յուշերից

ՏԵԼԵՖՈՆ № 282

Լոյս է տեսնում շաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 24 կիրակի յուլիսի 4 | տասներորդ տարի 1899

ԹԱԳԱԺԱՌԱՆԳ ԳԻՕՐԳԻ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎԻՉ

1871—1899

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՄԱՆԻՖԵՍՏ

Ողորմութեամբն Աստուծոյ Մենք, Նիկողայոս Երկրորդ, կայսր և Ինքնակալ Համայն Ռուսիայի, Թագաւոր Լեհաստանի, Մեծ Իշխան Ֆինլանդիայի և այլն, և այլն և այլն: Յայտարարում Ենք բոլոր Մեր հաւատարիմ հպատակներին.

Այս յունիսի 28-ին վախճանուեց Աբասթումանում Մեր Սիրեցեալ Եղբայր Թագաժառանգ Ցեսարևիչ և Մեծ Իշխան Գիւորգի Ալէքսանդրովիչ: Հիւանդութիւնը, որին ենթարկուել էր նորին Կայսերական Բարձրութիւնը, թուում էր, թէ դեռ կարող էր տեղի տալ ձեռնարկած բժշկութեան ներգործութեանը և հարատային կլիմայի ազդեցութեանը. բայց Աստուած այլ կերպ տնօրինեց: Ընտրուելջ հնազանդուելով Աստծու նախախնամութեանը, Մենք հրաւիրում ենք Մեր բոլոր հաւատարիմ հպատակներին մասնակից լինել մեր սրտագին վշտին և ջերմեռանդ աղօթքներին Մեր Հանգուցեալ Եղբօր հոգու հանգստութեան համար:

Այսուհետև քանի դեռ Աստուծուն հաճելի չէ օրհնել Մեզ այս գաւակի ծննդեամբ, համայն Ռուսիայի գահը ժառանգելու ամենամօտիկ իրաւունքը, գահաժառանգութեան վերաբերեալ պետական հիմնական օրէնքի ճիշտ հիման վրայ, պատկանում է Մեր Ամենասիրելի Եղբայր Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրովիչին:

Տրուած է Պետերհոֆում յունիսի 28-ին, Քրիստոսի ծննդեան Հազար ութ հարիւր իննսուն իններորդ տարին, իսկ Մեր թագաւորութեան հինգերորդ տարին:

Իսկականի վրայ Նորին Կայսերական Մեծութեան Սեպհական ձեռքով գրած է.

ՆԻԿՈԼԱՑ

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ ԹԱԳԱԺԱՌԱՆԳ ՑԵՍԱՐԵՒԻՉԻ ՈՂԲԱԼԻ ՄԱՀԸ

—

Մի չաբաթ է, որ ամբողջ Ռուսիան սգի մէջ է. Աբսոլիւտիզմից հատած դուժաքեր հեռագիրը Թագաժառանգ Ցեսարեւիչի մահուան մասին՝ համակել է համայն ժողովրդին խորին վշտով։

Ութ տարի կըլինի, որ ի Տէր հանգեալ Թագաժառանգը լծկուում է իր ծանր հիւանդութիւնից և մեծ յոյս կար, որ Աբսոլիւտիզմի մեղմ կլիման կ'օգնէ Օգոստափառ հիւանդի առողջութեան բարելաւման։

Հանգուցեալ Թագաժառանգը ծնուեց 1871 թուի ապրիլի 27-ին։ Նա երկրորդ որդին է Ալէքսանդր III-ի և Այրի Կայսրուհի Մարիա Ֆէօդորովնայի։ Երբ Նիկոլայ II գահ բարձրացաւ, Նրա Օգոստափառ Եղբայր Մեծ Իշխան Գիօրգի Ալէքսանդրովիչը հրատարակեց Ռուսական գահի ժառանգ։ Այնուհետև Թագաժառանգ Ցեսարեւիչը դեպի Արեւելք ճանապարհորդութիւն կատարեց։ Հասնելով Եգիպտոս և Հնդկաստան, Մեծ ճանապարհորդը չկարողացաւ շարունակել ճանապարհորդութիւնը և վերադարձաւ Ռուսիա, որովհետև հիւանդութիւնը արգելք եղաւ ամեն հեռաւոր ճանապարհորդութեան։ Դրանից յետոյ Թագաժառանգը հաւատարիմ շարունակ լինակուում էր Աբսոլիւտիզմին, ուր իր հարուստ գրադարանում պարապում էր իրան սիրելի առարկայով՝ Կովկասագիտութեամբ։

Հանգուցեալ Մեծ Իշխանը հետաքրքրելով իր հայրենիքի՝ ամբողջ պետութեան վիճակով, առանձնապէս Նա սիրում էր մեր երկիրը և նրա ժողովուրդը։ Նա իր սրտին մօտ էր ընդունում տեղական ազգաբնակութեան բոլոր կարիքները և շատ շատերն էլին վայելում Նրա ողորմածութիւնը։ Կովկասի այլացեղ ազգաբնակութիւնը իր կողմից անկեղծ սիրով էր վերաբերում իր Հովանաւորին և բուռն կերպով ցանկանում էր, որ Նա առողջութիւն գտնէր մեր երկրում։

Ամեն ճակատագիրը այլ կերպ էր տնօրինել և սիրելի Մեծ Իշխանը իր մատաղ կեանքի վախճանը՝ ի սուգ և տխրութիւն համայն Ռուսիայի՝ գտաւ մեր երկրում։

Ամբողջ Ռուսիայի ժողովուրդը այսօր չերմագին վշտակից է Կայսերական Ընտանիքին, այս մեծ դըժբախտութեան օրում։

ՀԻՆ ՈՒՐԱՐՏՈՒՆ (ԱՐԱՐԱՏԵԱՆ ԻՋԽԱՐՀԸ) ԵՒ ԱՍՈՐԱ-ԲԱԲԵԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՀԵՏՔԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ *)

—

Պատմական աշխարհագրութեան գլխաւոր խնդիրներից մէկն է ճիշտ կերպով որոշել քաղա-

*) Պրոֆ. Մ. Վ. Նիկոլսկու սոյն յօդուածը թարգմանել եմ „Братская помощь“ գրքից, որը մի տեսակ բեզիմ է մինչև այժմ գտնուած սեպաձև արձանագրութիւնների մասին. ուստի և աւելորդ չըհամարեցի տեղ-տեղ ընդարձակ ծանօթութիւններ դնել, օգտուելով գանազան աղբիւրներից, որպէս լրացուցիչ նոյն նիւթի տեսութեան։

քակրթութեան հին կենդրոնները և նրա տարածման սահմանները դէպի աշխարհի զանազան կողմերը այլ և այլ ազգերի և երկիրների մէջ: Պարսկութեան ամենահին քաղաքակրթութիւնները պէտք է համարել ասորա-բաբելականն ու եգիպտականը, որոնք պատմական շրջանում ազգակցական սերտ կապերով կապւում են արևելքի և արևմուտքի քաղաքակրթական զարգացման հետ: Արդեօք իրանց ծագմամբ այդ երկու քաղաքակրթութիւնները իրարից անկախ էին, թէ, ինչպէս աւելի հաւանական է, երկուսը մի ընդհանուր աղբիւրից էին առաջացել. սա մի այնպիսի խնդիր է, որին գիտութեան ներկայ դրութեամբ անկարելի է ճիշտ պատասխան տալ: Զարգացմամբ այդ երկու քաղաքակրթութիւնները բոլորովին տարբեր և իւրաքանչիւրն առանձին հետազօտութեան ենթակայ են: Ասորա-բաբելական քաղաքակրթութիւնն սկիզբն առաւ Միջագետքի հին թագաւորութիւններից, որոնք հիմնուած էին հինգ կամ աւելի հազար տարիներ նախքան Քրիստոս:

Միջագետքի հարաւային սահմաններում, Պարսից ծոցի մօտերը, Քրիստոսից երկու հազար տարի առաջ Եփրատի ափերում հիմնւում է Բաբելոնի թագաւորութիւնը, իր համաշխարհային, պատմական կենդրոն Բաբելոնով. ապա աւելի դէպի հիւսիս, Տիգրիսի ափերին բարձրանում է Բաբելոնի ցեղակից Ասորեստանը, որն սկզբում կազմում էր Բաբելոնի մի նահանգը, յետոյ զարձաւ նրա մրցակիցը, իսկ վերջը՝ համաշխարհային տէրութիւն՝ նուաճելով Բաբելոնը և շրջակայ բոլոր երկրները:

Բաբելական և ասորական թագաւորներն անկասկած սեմական ցեղից էին. իսկ Միջագետքի ամենահին թագաւորութիւնների մասին նոյնը վըճռաբար կարելի չէ ասել, ամենից ուղիղն այն է, որ նրանք սեմական ցեղից չէին: Բաբելական լեզուն, որ գիտութեան մէջ Ասորեստանցւոց լեզու է կոչւում, զուտ սեմական է և հրէական լեզուին շատ մօտ է: Այդ լեզուն էին խօսում հիւսիսայինն և հարաւային Միջագետքի բոլոր ազգերը: Գրականութիւնն ու գիտութիւնը տարածուած էին և ունէին յատուկ կենդրոնները, որոնց մէջ, ինչպէս հիմիկւայ գրատուներում հաւաքուած էին զանազան դարերշրջանների զանազան բովանդակութիւն ունեցող մեծաքանակ գրական արդիւնքները:

Սակայն ասորա-բաբելական քաղաքակրթութիւնը չէր սահմանափակւում միայն Միջագետքի սահմաններում ասորա-բաբելական ցեղերի ժողովրդների մէջ: Առաջաւոր Ասիայի բոլոր ազգերն այս կամ այն ժամանակ, որոշ չափով վայելեցին բաբելական քաղաքակրթութեան բարիքը: Սրանից յետագայ դարերշրջաններում նպաստեցին ասորական նուաճումները և այժմ դրականապէս հաստատուած է, որ Քրիստոսից 15 դար առաջ, երբ դեռ Ասորեստանը համաշխարհային պետութիւն կազմելու չափ զօրեղ չէր, այն ժամանակ բաբելական քաղաքակրթութիւնը լիովին տարածուած էր Ասորիքի, Պաղեստինի և Միջագետքի Հիւսիսային ազգերի մէջ: Բաբելական լեզուն իր սեպագիր գրով մի այնպիսի միջոց էր, որ կատարում էր հաղորդակցութիւն անկախ ուրոյն ազգերի մէջ, օրինակ, Եգիպտոսի և Բաբելոնի մէջ: Նա միաժամանակ դիւանական լեզու էր արտաստհմանեան տէրութիւնների համար. օր. Եգիպտոսի փարաւոնները Պաղեստինն ու Ասորիքը կառավարում էին բաբելական լեզվի օժանդակութեամբ. ասորա-բաբելական լեզուն ամեն տեղ հասկանում էին և բաբելական ծագումն չունեցող ազգերի համար սեպագիր գրերի դժւար ձևակերպութիւնը, հասկանալի է, որ էական արգելք չէր կազմում: Մի խօսքով, նա նոյնն էր այն ժամանակ, ինչ որ է այժմս ֆրանսիական լեզուն և եթէ ժամանակակից փիլիսոփաներից մին, Էրնըստ Րընան, — ֆրանսերէն լեզուն անուանեց համաշխարհային քաղաքակրթութեան, մշտական լեզու, այսպիսի կիրառութեամբ Քրիստոսից 15 դար առաջ բաբելացի գիտուններն աւելի մեծ իրաւունք ունէին իրանց լեզուի մասին էլ նոյնն ասելու: Ժամանակակից քաղաքակրթութեանը ֆրանսիական ասել չի կարելի, մինչդեռ հեռաւոր դարերում առաջաւոր Ասիայի քաղաքակրթութիւնը ասորա-բաբելական էր և բաբելական լեզուն գեղեցիկ միջոց էր այդ քաղաքակրթութիւնը տարածելու համար: Բաբելական ծագումն ունեցող գրական մեծ գանձերը գրւում էին կաւէ տախտակների վրայ և տարածւում էին աշխարհիս ամեն կողմերը: Պէտք է կարծել, որ արևելքի հեռաւոր վայրերում օտարացեղ ազգերի մէջ էլ հիմնւում էին դպրոցներ, վարժոցներ, ուր սովորեցնում էին չափազանց դժւար ասորական գրագիտութիւնը — որն ունէր նշանների անթիւ աղիւսակներ, վանկագրեր և այլ ձևեր, որոնց նմուշները ներկայումս մեծ քանակութեամբ գտնւում են բրիտանական թանգարանում:

Եգիպտոսի փարաւոնների արխիւը գտնւեց 80-ական թուականների վերջերը, որի մէջ գտնւում են ասիական ազգերի կառավարիչների զեկուցագրերը և գրագրութիւնները: Այս բոլորը գրուած են բաբելական լեզուով և գրուած են 14 դար նախ-

СЮРПРИЗЪ № 24

քան Քրիստոս. ճեմարանները, գրադարանները, որոնք մի ժամանակ ուսումնավայրեր էին, անշուշտ դեռ ևս որևէ տեղ ծածկված են հողի տակ և զուցէ այդ հաստատութիւնները գտնւում են ոչ միայն Ասորեստանում, Բաբելոնում, այլև Ասորիքում, Պաղեստինում, Փոքր-Ասիայում, Եփրատի ակունքներում, նոյն իսկ Երևանի նահանգում և Կարսի շրջանում:

Բաբելական լեզւի հետ միասին տարածւում էին և բաբելական արհեստները, առօրեայ կեանքի առարկաները և որ աւելի գլխաւորն է՝ իրաւաբանական այն ձևերը, որոնք ստեղծած էին Միջագետքի հին աշխարհում: Բաբելական քաղաքակրթութիւնը մշակել է քաղաքացու իրաւունքների մասին խիստ որոշ ու պարզ հասկացողութիւն: Այդ օրէնքներից այժմ ահագին քանակութեամբ վաւերագրեր կան, որոնցով հնարաւոր է վերականգնել բաբելական իրաւագիտութիւնը: Այդ օրէնքները, գերմանացի, ֆրանսիացի և անգլիացի նշանաւոր իրաւաբանների կարծիքով, նախատիպն են հռոմէական օրէնքների: Միջազգային առևտրական և այլ յարաբերութիւնների մէջ, նկատւում է նոյն համաշխարհային միտքը և բարձր մարդասիրական ոգին, որով որոշւում էր զուտ բաբելական քաղաքակրթութիւնը: Միայն յետին դարերշրջաններում Ասորեստանն իր աշխարհակալական ձգտումներով և զինուորական խստութիւններով միջազգային յարաբերութիւնների մէջ մտցրեց մի փոքր դաժան տարրեր և թոյլ էր տալիս, որ ուժեղն իր իրաւունքն ի չարը գործ դնէ: Բայց 15 դար Քրս. առաջ, մենք տեսնում ենք ազգերի սրտակից եղբայրութիւն, քաղաքակրթութեան ձեռք բերած բարիքի աշխոյժ փոխանակութիւն և առաջաւոր արևելքի ազգերի նկատելի բարձր բարոյականութիւն:

Մարդկութեան զարգացման այս շրջանում, երբ աշխարհն առաւելապէս Բաբելոնինն էր, մեզ համար հետաքրքիր են ոչ միայն խոշոր պատմական մեծութիւնները, որպիսիք են՝ Ասորեստանը, Բաբելոնը, Եգիպտոսը, այլ և պատմական փոքր ազգութիւնները, որոնք պատկանում էին այդ ժամանակների քաղաքակիրթ ազգերի թւին և կենդրոնից քիչ կամ շատ հեռու գտնւող երկրների մէջ բաբելական քաղաքակրթութեան սերմնացաններ էին: Ներկայումս Ասորիքի և Պաղեստինի ազգութիւնները ներկայացնում են առանձին հետաքրքրութիւն, որոնց յուշարձանները մեծ քանակութեամբ սկսում են լոյս աշխարհ տեսնել: Այդ տեղերում ուրիշների հետ ապրում էր հրէական մեծ ազգը. մեծ ոչ թէ իր քաղաքական նշանակութեամբ, այլ կրօնական առաքելութեամբ, որի ծոցից դուրս եկաւ քրիստոնէական համաշխարհային կրօնը: Նրան է պարտական իր ծագմամբ նոյնպէս դուստ-արևելեան կրօնը, ժամանակակից արևելքի բազմամիլիոն մահմեդականութիւնը: Բայց մենք այժմ հնար ունինք բարձրացնելու հեռաւոր դարերի Պաղեստինի վարագոյրը, երբ դեռ չէր բնակւում այդ վայրերում հրէական ժողովուրդը: Դեռ Մովսէսը չէր առաջնորդել Աստուծու ընտրեալ ազգին աւետեաց երկիրը, Պաղեստինն այն հեռաւոր դարերում ունէր իր պատմութիւնը և մենք հիմա ունինք այդ դարերի յուշարձանները բաբելական լեզւով, որն այդ միջոցներում տիրապետում էր այդ տեղերին:

Իսկ մենք մասնաւորապէս պէտք է զբաղւենք այն ազգութիւններով, որոնք ասորա-բաբելական տիրապետութեան ժամանակ բնակւում էին Կովկասի մէջ և թողել են իրանց կեանքից յուշարձանները: Ընդայիլով՝ որ վաղուց չէ Անդրկովկասում *)

*) Անդրկովկասի ուսումնասիրութեան հիմքը դրեց գիտնական Ձուլցը, որ առաջին անգամ Իրանսիական կառավարութեան կողմից ուղարկւած էր հետազօտելու Վանի սեպագիր արձանագրութիւնները 1827 թ-ին: Նրանից յետոյ ճանապարհորդեցին՝ Լէյարդ 1850-ին, Ս. Ներս. Սարգսեան 1864-ին և Բոստամի 1877-ին: Նրանց ընդօրինակած արձանագրութիւններով զբաղեցին արևմտեան ազգերի գիտնականները՝ Ռինկա, Հէնրի Ռաուլինսոն, Էդ. Նորման, Մորդման, տոքտ. Ռոբէրտ, Ս. Ռիչար, Սէյս, Միլլէր, իսկ Ռուսաստանում նոյն ինդրով զբաղեցին կոմս Ուվարով, կոմսուհի Ուվարովա, Պատկանեան, Նիկոլսկ և այլն: Որպէս գիտնականներին այդ խնդրով պարապելու նիւթ տին գեր Մեսրովբ եպ. Սմբատեանի գտած արձանագրութիւնները: 60-ական թուականներին կարդալով Մխիթարեանների աշխատութիւնները, նա իմանում է, որ մեր երկրում կան սեպագիր արձանագրութիւններ. նա այնուհետև սկսում է հաւաքել այդ արձանագրութիւնները, կարծելով՝ թէ նրանք հայոց պատմութեան հետ կապ ունին: Արձանագրութիւններից եթէ ոչ բոլորը, (երեսուն և չորս տարւայ ընդացքում Երևանի նահանգում գտնւած են քսանից աւելի արձանագրութիւններ, որոնցից 10-ը գտնւում է Գ. ճեմարանի շինութեան մէջ) գոնէ մեծ մասը նա է գտել, ընդօրինակել և հրատարակել է մի մասը «Համբաւաբեր Ռուսիոյ» օրագրի և միւս մասը «Արարատի» մէջ: Նրա նկարներն անյաջող էին, բայց և այնպէս ուսուցչապետ Ք. Պատկանեանի միջնորդութեամբ հասնում էին արևմտեան գիտնականներին:

1892-ին Մեսրովբ եպ. ընտրւում է Մոսկ. Հնագ. ընկերութեան անդամ և ուղարկում է իր գտած արձանագրութիւնների լուսանկարները և նրանց գտնելու մասին համառօտ տեղեկագիրը: Դրանով մեր երկիրն սկսում է գիտնական ուսումնասիրութեան նիւթ դառնալ, մինչև որ հասաւ ներկայ հայեացքներին: Ծ. Թարգ.

հետազոտութիւններ կատարելը, այնուամենայնիւ, մենք արդէն ունինք լիովին ճիշտ աշխարհագրական և պատմական նիւթեր։ Գտած և ուսումնասիրւած յուշարձանների շնորհիւ, մենք կարող ենք գատել 8 դար Ք.ս. առաջ այդ տեղերի պնցեալի մասին և գծել մեր ընտրած շրջանի համալ Անգրկովկասի աշխարհագրական քարտէսը։

Միջագետքից դէպի Հիւսիս, Տիգրիս և Եփրատ գետերի ակունքների վրայ և Վանի, Գեօկչայի և Ուրմիոյ լճերը շուրջը կենում էին բազմաթիւ ցեղեր, որոնք ոչ մի ցեղական կապ չունէին Ասորիքի և Միջագետքի սեմական ցեղերի հետ։ IX և X դար Ք.ս. առաջ այս ցեղը ասորական յիշատակարանների մէջ կրում էր մի ընդհանուր անուն՝ Նաիրի։ IX-դ դարի երկրորդ կիսում այս ցեղերը կազմում են մի պետութիւն, որը ասորական յիշատակարաններում կոչւում է Ուրարտեան երկիր, իսկ հրէական բիբլիական գրքերում Արարատ (այս անուանները նոյնանիշ են)։ Այս թագաւորութեան նախնական կենդրոնը գտնւում էր լեռնոտ երկրի հիւսիսում, որ եթէ մեծ Արարատի (Մասիսի) մօտերը, երևանի հարթութիւնները չէին, գոնէ Վանի լճից աւելի հիւսիս էր։ Ասորեստանի թագաւոր Սաղմանասարը կամենալով հասնել այս թագաւորութեան կենդրոնը, ստիպւած էր բարձրանալ լեռները, որոնք գտնւում էին Վանից դէպի հիւսիս և միայն վերջնականապէս յաղթելուց յետոյ ցած իջաւ դէպի Վանի լիճը։

Նկատելով, որ Արարատ և Արագած լեռների մէջ ընկած երևանի հարթութիւնը մինչև հիմա էլ Արարատեան նահանգ է կոչւում, շատ հաւանական է, որ բարձրաբերձ լեռներով շրջապատւած այդ հարթութեան սահմաններում սկզբում գտնւել Ուրարտեան թագաւորութիւնը։ Սակայն յետոյ, VIII-դ դարու առաջին կէսերին, ամենահաւանականն է, ռազմական դիտաւորութիւններով, այս թագաւորութեան կենդրոնը դէպի հարաւ փոխադրւեց, դէպի Վանի լճի ափերը, որտեղ գտնւում է հիմիկւայ Վան քաղաքը։ Վանի ահագին ժայռերն իրանց շրջապատող լեռներով նոր թագաւորութեան համար ծառայում էին որպէս պատսպարան Ասորեստանի հետ ունեցած պատերազմների ժամանակ։ Այստեղ հարիւր տարուց աւելի իշխում է մի թագաւորական տոհմ, 6 թագաւորների հօրից որդի յաջորդութիւն։ Այս հարստութիւնը նշանաւոր է համաշխարհային պատմութեան մէջ, որպէս հզօր հակառակորդ ասորական միապետութեան։ Համարեա ամեն տարի ասորական աշխարհակալները արշաւում են Ուրարտեան կամ Արարատեան կտրիճ ազգի վրայ, որը, դատելով թողած յուշարձաններից, ոչ միայն զօրեղ ընդդիմութիւն է ցոյց տալիս, այլ և շատ անգամ յարձակողական դիրք է բռնում Ասորեստանի դէմ, կամենալով խլել Ասորեստանի սեպհականած համաշխարհային միապետութեան դեկը։ VIII-դ դարի առաջին կիսում, Թակղա-Պալասար II-դից առաջ, գերակշռութիւնը պարզապէս Ուրարտուի կողմն էր. ասորական պետութեան բոլոր հիւսիսն ու արևմտեան մի մասն անցել էր Ուրարտուի ձեռքը։ Կշռի նժարները տատանւել էին և կարող էր պատահել, որ սեմական ցեղի տեղ աշխարհին տէր դառնար Ուրարտեան ցեղը և շրջեր համաշխարհային պատմութեան ընթացքը։ Բայց վարչութեան փոխելով՝ անսպասելի կերպով Ասորեստանի ոյժը մեծացաւ և նա վրիւեց անկումից։ Ուրարտուն յաղթւած էր, բայց հետևեալ Սարգոն թագաւորի օրով, ասորական արձանագրութիւնների մէջ անուանւած Ուրարտեան Ռուսան կամ Ուրսան թագաւորը, Ասրեստանի դէմ հանեց ողջ հիւսիսն ու արևմուտքը, սեմական և ուրարտեան ցեղերի մէջ տեղի ունեցաւ մի ահեղ ճակատամարտ, որ վերջացաւ երկրորդի պարտւելով։

Նեռսէս Բահ. Նիկողոսեանց

(Արշաւուճակի)

ՋՂՋՄԱՆ ՕՐԵՐ

—

Թողնենք այս հոգսերը, թողնենք այս աշխարհ
Եւ մի այլ աշխարհ սրբանանք ստքով.
Գընանք Աստուծոյ պանծալի տաճար
Կրքերից ազատ եւ ուրախ հոգւով։

Գընանք ու լրսենք Քրիստոսի խօսքերը,
Մաքսաւորի պէս ղողան մեծ կանգնենք.
Առօրեայ կեղտից մաքրենք մեր սրտեր
Եւ ջերմ աղօթքներ երկինք առաքենք։

Եւ ունայնութեան լափլեզ խարոյկին,
Որ լայն է այնքան սփռել իր խոցեր,
Կեանքի տենչով լի յանձնենք խնդագին
Ջղջացած հոգու ժանգոտ շղթաներ։

Ոնոփրիոս Ա.Մովսեան

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

Գրականութիւն եւ մամուլ

ԱԿՆԱՑ [1]) ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐԸ

Տխուր վերյուշում մոնեցայ Ն. Պէրպէրեանի Կ. Պոլիս հրատարակած «Ժողովրդ. Տառեցոյց»-ը աչքէ անցնելով։

Այդ գրքին մէջ պատահեցայ ժողովրդական մի քանի երգերու, հեղինակութիւն Ակնեցոց, որոնք այս տեսակ երգերու ահագին հաւաքածուներ ունին չօրինած վալ ժամանակներէ ի վեր։

«Ակնայ Հնութիւնք [2])-ը, որ համանուն քաղաքի անցեալի, աւանդութեանց, և բարք ու վարքերու յիշատակարան մ'է, այս և այլ ամեն կարգի ժողովրդական երգերու էլ կարևոր ժողովածոյ մի կըպարունակէ իր մէջ։ Բայց դեռ շատ կան չըյիշատակուած, պակաս մնացածներ, որոնց բոլորն հաւաքելը, պէտք է, ասել թէ այնքան էլ հեշտ չէ։

Ակն քաղաքի բնական դիրքը գեղեցիկ է։ Նա իբրև նազելի ու գեղանի դժլուոյ մ'է որ կըբարձրանայ Եփրատի աջ եզերքին վրայ, փոքր և Մեծ-Հայոց սահմանագծին մէջ։ Հիմնարկութիւնը պատմագիրներէ ոմանք կըվերագրեն Արծրունեաց Սենեքերիմ թագաւորութեան օրերուն։ Ոմանք էլ, ինչպէս նաև ժողովրդական աւանդութիւնը. Անի մայրաքաղաքի կործանման թւականին... Յամենայն դէպս հին քաղաք է, պատմական, բեղմնաւոր անցեալով։

Արևելքէն ու արևմուտքէն երկու բարձրաբերձ լեռներ, իրանց սէգ գլուխը ցցած, քաղաքը կըհովանաւորեն։ Իսկ հիւսիսն ու հարաւը կըզարդարեն գունագեղ բլուրներ՝ իւրաքանչիւրերով։

Զքնաղ երկինք, քաղցր ու զովալ ջրեր։ Եգեմական շուք մի ընդգծել է բիւրաւոր պարտէզներ, գետեզերքն աստիճանաբար բարձրացող քաղաքին մէջն ու շուրջ։

Քաղաքին ընդհանուր երևոյթը, ներքուստ թէ արտաքուստ, կատարեալ բանաստեղծական պատկեր մ'է, այնքան հրապուրիչ և յանգուցիչ։

Եւ Ակնեցին, իրաւամբ՝ ուղղակի սիրահար մ'էր իր ծննդավայր քաղաքի բանաստեղծական գրաւիչ գեղեցկութեանցը։ Նա որ օտար քաղաքի կամ երկրի մէջէն էլ պանդուխտ էր, եթէ մինչև անգամ երկար տարիներով, դարձեալ իր հոգիին ու սրտին մէջէն դուրս չէր ելներ բնաւ իր հայրենիքի յիշատակը։

Բայց կըյիշէք անշուշտ, որ 1896 թուին կրած Ծանօթ աղէտի ահաւոր հարուածէն քանդուեցաւ ու աւերեցաւ այդ գեղեցիկ քաղաք... Ու ակնեցին, այլևս հիմակ չ'ուզեր մտաբերել իր հայրենիքի յիշատակը...

Ներքև դրած երգի-օրինակը, կըներկայացնէ Ակնայ թէ մաքուր գաւառաբարբառի և թէ իր զգայնոտ երկսեռ երիտասարդներու սիրային զգացմանց մէկ աղօտ նմուշը։ Այն կրակոտ զգացմանց, որոնք յաճախ իրանց անօթը վառելով մոխիր կըդարձնեն...

Անյոյս՝ սև սէրեր շատ կըպատահին...

Ո՛րքան սիրող երիտասարդներ, սիրող տնտեսական անողոք պայմաններու բերմամբ, կըպարտաւորեն հեռանալ իրանց հայրենիքի քնքոյշ ծոցէն, ընտանեկան անդորր յարկէն, ու սիրուհւոյ անարատ սիրաբոյր գրկէն։

Օտարութեան մէջ կըմնան առնազը հինգ, և երբեմն տասնեակ տարիներ։

Երկու սիրողներու կարօտակէզ սիրային զգացումները, ժամանակ մի կըմնան միևնոյն բուռն թափով վառ։ Բայց կարծէք թէ, երթալով անզգայաբար եռալէ կըդադարին, և սրտերու տեսակ մի ընդարմացում, ու զգայնութեան անընդունակութիւն կըյաջորդէ։

Սա անբնական չէ։

Որովհետև ժամանակին հետ կ'անցնին նաև այդ սիրավառ գոյգերու երիտասարդական եռանդը, աւիւնն ու արեան եռ ջերմութեան աստիճանը։

Կըպատահի երբեմն մինչև անգամ որ, սիրող երիտասարդը իր պանդխտութեան մէջ ոտքերուն անյաղթելի ցանց հիւսող ծանր ձախորդութեանց ենթարկուած, թշուառ՝ հիւանդ ու հիւծած գետին կըտապալի, մէկ էլ չի կանգնելու։

Ու սև օր մ'էլ, այդ տարաբախտ երիտասարդի մահուան սև լուրը կըհասնի սիրուհւոյն, որուն սէրն ու սիրտը մշտական սև սուգով կըծածկուի։

Եւ այդ՝ սիրածը կորցրած հէք կոյսի ծածուկ հառաչները, և լուռ լացերն ու կոծերը, միացած տառապագին գալարող անմխիթար հոգու կըսկիծին, կըմաշեցնեն տակաւ իրեն, կըսևացնեն իր կեանքը, կըխաւարեցնեն արևը։ Եւ նա, վերջ ի վերջոյ, կ'իջնէ սև դերեզման իր սև գաղտնիքին հետ, հարսնութիւն անելու համար՝ սև հողուն մօտ...

Ահաւասիկ երգը։

„Աղուոր մի տեսեր եմ
Ուր երեսին երեք պէճկ ունի,
Բերանն է բոլոր, աղուոր
Տուփ նրման քան զինկենի։

Աչքերն է լուսնի նրման
Ո՛վ տեսնէ խելաց կըթափի,
Ծոցերն է ոսկի սնտուկ
Վարդի ջուրն ի մէջ ժողովի։

Բերանն է անուշով լեցուած,
Պըռկըներն ի վար կու վաթի,
Իր բերնին քաղցրութենէն՝
Բրռնկեր սրտիկս ու կ'երթի։

Մարդն ուր սիրու տէր լինի,
Անսիրուն ճարակ չըլինի,
Ինքը գերեզմար բանայ
Ուր մտնէ հողն կենդանի։

Սըրտիկն ալ ի բաց թողու
Ուր ելնէ բոցն ծիրանի,
Անցնող ու դարձող բոլ՝
Սիրու տէր մարդ է՝ կու վառի։

Ս. Մ. Ծոցիկեան

Լ. ԿԱՄՕԷՆՍԸ ԵՒ ՆՐԱ «ԼՈՒԶԻԱԴԱ» ՊՕԷՄԱՆ

I.
Կամօենսի կենսագրութիւնը

Փորթուգալացի հռչակաւոր բանաստեղծ Լուդովիկ Կամօէնսը (1525—1579) սովորել էր Կոյիմբրում. դեռ համալսարանում եղած ժամանակ, նա գրեց մի քանի սոնետներ և այլ բանաստեղծութիւններ։ Կամօէնսը ազատ, վառ երևակայութիւն ունէր։ Գիտութիւնների դասընթացը աւարտելուց յետոյ, նա եկաւ Լիսաբոն, որտեղ հրապուրեց Կատերինա Ատայդի կոչուող, մի պալատական տիկնոջով. այդ հրապուրանքը պատճառ գարձաւ վէճի, որից յետոյ բանաստեղծը աք-

---

[1]) Քաբերդ Նահանգի իրաւասութեան տակ։

[2]) Յ. Ճանիկեանի, Թիֆլիս, 1895 թ.։



Թղթադարանից դեպ ձեռքերիչի պատին կախված էլեկտրական տեսակը

սուրեցաւ Լիսսաբոնից։ Աքսորան բում Կամօէնսը մի քանի բանաստեղծութիւններ գրեց։ Ապրուստի միջոցների պակասութիւնը ստիպեց նրան դիմել զինուորական ծառայութեան։ Զինուորական մարդ դառնալով, նա շարունակեց ոտանաւորները գրելը և նշանաւոր հանդիսացաւ Ցէյտայ մօտի կռւում, ուր գնդակը զրկեց նրան աջ աչքից։ Կամօէնսը ստիպւած եղաւ վերադառնալ Լիսսաբոն, ուր նա յոյս ունէր պարգև ստանալու կուի դաշտում կատարած գերազանց գործի համար։ Բայց Լիսսաբոնում ոչ ոք էլ չէր մտածում զբաղելու բանաստեղծով։ Դժգոհութեամբ լցւեց Կամօէնսի սիրտը, և նա ուղևորւեց դէպի արեւելեան Հնդկաստան։ Ճանապարհին փոթորիկը ոչնչացրեց նաւատորմից երեք նաւեր և նա հազիւ ազատեցաւ մահից։ Հնդկաստանում ևս Կամօէնսի յոյսերը չիրականացան և նա կրկին զինուորական ծառայութեան մտաւ։ Բանաստեղծի հայրենասիրութիւնը միշտ աւելի ու աւելի էր վառւում, երբ նա այցելում էր այն տեղերը, որոնք հռչակել էին փորթուգալացիների Հնդկաստանում կատարած փայլուն յաղթանակներով։ Բայց այնտեղի կառավարութեան վարմունքը խիստ վայրագ էր պատճառում նրան. բանաստեղծը մի երգիծաբանութիւն գրեց, այս վերնագրով. «Անկարգութիւններ Հնդկաստանում». փոխ-արքան վիրաւորւեց Կամօէնսի յանդիմանութիւնից և աքսորեց նրան Չինաստանի ափերի մօտ գտնւող Մակաօ կղզին։ Աղքատութիւնը մինչև այնտեղ հասցրեց բանաստեղծին, որ Մակաօ կղզում, նա վճռեց մեռածների կայքերի վրայ վերակացութիւն պաշտօն ընդունել։ Այդպէս նա ապրեց հինգ տարի, աշխատելով այն դիւցազներգութեան վրայ, որ պիտի կազմէր նրա փառքը։ Մակաօ քաղաքը Չինաստանի հողի հետ կապող պարանոցի ամենաբարձր կէտի վրայ, այն տեղում, որտեղից երևում է նրանց ափերը շրջապատող երկու ծովերի և լեռնաշղթաների հրաշալի տեսարանը, դեռ այժմ էլ ցոյց են տալիս, համբերեա ծովի վրայ կախւած, ժայռի միջի խոռոչը, որին կոչում են Կամօէնսի քարայր, ասում են այդտեղ էր առանձնանում նա գրելու իր պօէման... Նոր փոխ-արքան թոյլ տւեց Կամօէնսին վերադառնալ Գօեա։ Այդ ժամանակ այն նաւը, որով վերադառնում էր Կամօէնսը, խորտակւեց մի գետի բերանի մօտ, և բանաստեղծը, մի տախտակի վրայ հազիւ հազ կարողացաւ փրկել իրան և իր միակ գանձը— պօէման։ Դժբախտութիւնները շարունակում էին հալածել Կամօէնսին. Գօեաում նա բանտարկւեց վերակացուի պաշտօնը վատ կատարելու և պարտքերի համար։ Գեղարւեստը սիրողները ստորագրութեամբ փող ժողովեցին ու ազատեցին բանաստեղծին։ Կամօէնսը վերադարձաւ Լիսսաբոն այն ժամանակ, երբ սարսափելի ժանտախտը ճարակում էր Փորթուգալիան։ Սեբաստեան թագաւորը ընդունեց պօէմայի նւիրաբերութիւնը և Կամօէնսին նշանակեց մի փոքրիկ թոշակ —100 ր.։ Կամօէնսը տարաբախտ չքաւորութեան մէջ էր. շատ անգամ նա հաց չէր ունենում և նրա ծառան ստիպւած էր լինում գիշերը շրջել փողոցներում և ողորմութիւն խնդրել թշւառ պօէտի համար։ Սեբաստեան թագաւորը 1578 թւին ընկաւ պատերազմում. նրա հետ էլ խորտակւեցին լաւագոյն ապագայի սպասող Կամօէնսի վերջին յոյսերը։ Խորին վիշտը բանաստեղծին ձգեց մի դժբնդակ ցաւի մէջ։ Իր կեանքի վերջին օրերը Կամօէնսը անցկացրեց շրջապատւած հոգևորականներով ու մեռաւ, ինչպէս ենթադրում են, հիւանդանոցի մէջ, Լիսսաբոնում.. Բանաստեղծի մահից տասնևվեց տարի անցած, Փիլիպպոս II-ը հրամայեց գտնել նրա գերեզմանը և քարի վրայ փորագրել հետևեալ արձանագիրը. «Այստեղ հանգչում է Լուդովիկ Կամօէնսը, իր ժամանակի առաջին պօէտը։ Նա մեռաւ աղքատութեան մէջ»։

II

Լուզիադայի խարակտերիստիկը

—

Այս պօէման, որի վրայ հիմնւած է Կամօէնսի եւրոպական հռչակը, և որը մենք կոչում ենք «Լուզիադա» փորթուգալացոց լեզուով, այս վերնագիրն է կրում os Lusiados, «Լուզիտանեանք», այսինքն փորթուգալացիք։ Եւ իսկապէս Կամօէնսը ուզեցել է գրել մի զուտ ազգային բանաստեղծութիւն, ձեռք է առել երգելու հայրենի փառքը։ Եթէ նա իր պօէմայի նիւթ է ընտրել փորթուգալացիների նաւաճումները Հնդկաստանում, միևնոյն ժամանակ կարողացել է ամփոփել նրա մէջ աշխարհի միւս մասերում էլ նրանց կատարած մեծ գործերը, կարողացել է նրա մէջ միացնել այն ամենը, որ փառաւոր բաներ են գրտնւում պատմութեան կամ առասպելների մէջ նրա հայրենակիցների մասին։ Սխալւում են, ենթադրելով, որ Կամօէնսի հերոսն է Վասկօ-դէ Գաման, որ մնացած բոլորը, ինչ որ չէ վերաբերւում այդ մեծ նովապետի էկսպեդիցիային, լոկ միջնավէպեր են։ «Լուզիադայի» մէջ գլխաւոր անձը—հայրենիքն է, իսկ միջնավէպեր —այն բոլորը, ինչ որ ուղղակի նրան չէ վերաբերւում։ Իր պօէման նա գրեց այնպիսի ժամանակ, երբ Փորթուգալիայի փառքերը իրանց գագաթնակէտին էին հասել,—երբ փորթուգալացիք փոփոխում էին ամբողջ աշխարհի ձևը, երբ այդ փոքրիկ պետութիւնը մեծ գործեր էր կատարում։

Կամօէնսի առանձնայատկութիւնն այն էր, որ նախնիների դիցաբանութեան հետ նա միացնում էր քրիստոնէական հաւատալիքներ։ Նրա պօէմայի մէջ մի կողմից մասնակցում են Իպիտերը, Վեներան, Պիանան, Նիմֆը և Վակխը, իսկ միւս կողմից Աստւած, Աստւածամայր և սրբերը։ Ծովի վրայ Վասկօ-դէ-Գամային պաշարում է մի սաստիկ փոթորիկ. Գաման ծրնկաչոք աղօթում է Փրկչի պատկերի առաջ.—բայց բանաստեղծութեան մէջ ընդունւած, դիցաբանութեան ոգով, նրան փրկում է ոչ թէ Քրիստոսը, այլ Վեներան։ Մեզ հակառակ է, մեր կրօնական համոզմունքների հետ անհամաձայն երկու աստւածային միջնորդութիւնների այդ շփոթումը, բայց այդ օտարոտի երևոյթը բացատրւում է այն դաստիարակութեամբ (համալսարանում այն ժամանակ առանձին ուշադրութիւն էին դարձնում դիցաբանութեան ուսման վրայ) և ազգային նախապաշարմունքով (փորթուգալացիք կարծում էին, որ Աստւած և բոլոր սուրբերը աչակցում էին նրանց Հնդկաստանին տիրելիս)։

«Լուզիադան» առաջին նորագոյն վիպասանական բանաստեղծութիւնն է. նրա առաջին հրատարակութիւնը երևաց 1572 թւին։

(Վերջը միւս անգամ)

Գիտություն

ՏԵՍԼԱՅԻ ՀՐԱՇԱԳՈՐԾՆԵՐԸ ՊԱՏԿԱԶ ՊԻԿ ԼԵՌԱՆ ԴԱԳԱԹԻՆ

—

Նիկոլա Տեսլան, որ այսօր համարւում է աշխարհում էլեկտրական գիտութեան փորձառու և էկսպերտ անձնաւորութիւն, իր էլէքտրական լաբորատորին հաստատած է ամպերի մէջ, Գոլորատոյի Պայկ Պիկի մայր գագաթի վրայ, որ ամենաբարձր լեռն է Հիւս. Ամերիկայում։

Տեսլան աշխատում է այնտեղ մի նոր և հրաշալի գիւտի փորձերով։ Նա հաւատում է, որ իր գիւտի շնորհով պիտի կարողանայ հրկիզը Մարս մոլորակի հետ յարաբերութեան դնել, միայն եթէ Մարսում ապրող բնակիչները գիտնականապէս այնքան զարգացած լինէին, որ կարողանային signal-ից հասկանալ։

Սա մի շատ վտանգաւոր ձեռնարկ է, որովհետև կարող է մթնոլորտը բռնկել, ինչպէս ինքը Տեսլան ասում է, «ես չաճախ այն փորձնական երկիւղն եմ ունեցած, թէ կարող է մթնոլորտը բռնկել և դա սարսափելի հաւանականութիւն է»։

Մինչդեռ ընդունելով, որ սա մի վտանգաւոր ձեռնարկ է, ասում է, «New York Journal»-ը, բայց և այնպէս, Տեսլան, իր խուզարկութեանց լուրջ հետամուտ է, նա մի մարդ է, աւելացնում է թերթի խմբագիրը, որին ոչ մի հաւանական վտանգ չի կասեցնէր։ Մի քանի տարի սրանից առաջ իբրև օրէնք ընդունեց էլէկտրական գիտութեամբ պարապուողների կողմից, որ մի քանի հազար վոլտ (volt) էլէկտրական ոյժը անշուշտ կը-սպաննէ մի որևէ շնչաւորի։ Տեսլան դրա հակառակը հաստատեց գիտական մի ակումբի ներկայութեանը իր անձի վրայ փորձելով ենթադրւած ոյժից տասն անգամ աւելի voltage-ով, որ ոչնչով չվնասեց Տեսլային։

Վեց տարի սրանից առաջ Տեսլան հրատարակեց, որ ինքը կարող է խօսքեր փոխանակել և signal տալ մէկ տեղից միւսը առանց թելերի։ Բոլոր մարդիկ ծիծաղեցին նրա վրայ, մինչև դուրս եկաւ Մարգոնին, որը հետևելով Տեսլայի թէօրիին, խօսքեր փոխանակեց Դովրից դէպի Գալէ և որը ողջունեց որպէս մի հրաշագործ։

Եւ այժմ Տեսլան մեկուսացած Գոլորատոյի բարձունքին վրայ իր միւս երկու թէօրիաների փորձերն է կատարում։

Նա պիտի կարողանայ ստեղծել այնպիսի ուժեղ էլէկտրական հոսանք, որ օդը իր ծածանումներով տանի նրան մտադրւած տեղը. հեռաւորութիւնը տարբերութիւն չանէր։ Այս հոսանքը բոլորովին տարբերւում է Մարկոնի գործածած անթել թէլէկրաֆի սիստէմից։

1893-ին Տէսլան լիովին ապացուցեց որ նա կարող է խօսքեր փոխանակել ցամաքից ծովի վրայ նաւի հետ, որ և նաւում գտնուողները հասկանան այն և պատասխանեն. պնդում էր Տեսլան, «եթէ ես չկարողանամ անել այդ՝ իմ գլուխս կ՚տամ». բայց դա նոյնպէս ծաղրով ընդունւեց։

Ինչպէս նկատում է «New-York Journal», հիմա էլ կան մարդիկ, որոնք ծաղրով են վերաբերւում դէպի Տեսլան, և այլ կերպ են մեկնում նրա իր բնակավայրը թողնելով Գոլորատոյ գնալը։ Տեսլան Գոլորատոյի Պայկ Պիկը ընտրեց իբր իր փորձերի յարմար վայր նրա համար, որ այդ լեռը բաւական բարձր է առանց թելի թէլէկրաֆի համար. առաւել ևս Գոլորատոն ամենայարմար տեղն է, որովհետև ասում է «New-York Journal», դա առանց թելի թէլէկրաֆ էլ չէ, այլ շատ աւելի կարևոր բան—առաքումն ոյժի։

Տեսլան այժմ կարող է արդէն ձեռք բերել որոշ տարածութեան վրայ և կառավարել 8,000,000 volt-ի էլէկտրական սեղմում (pressure)։ Նա հաւատում է, որ պիտի կարողանայ այդ ոյժը ուղարկել ուղիղ նուրբ օդի միջով և առանց թելի օգնութեան իր ցանկացած տեղը։

Զարմանալին նա է, որ գիւտը կախւած է մի կտոր ապարատից, որին Տեսլա անւանած է oscillator (ծածանական)։ Այս մեքենան նման է ճիշտ այնպէս, ինչպէս մէկը մի վերստ երկարութեամբ ռէտինով պատած պղինձ թել վերցնէր և փաթաթելով միմեանց վրայ զբօսնուր։ Մի խօսքով մեքենան նման է մի հսկայ սարդի ոստայնի, մի շրջանակի վրայ պնդացրած։

Տեսլա կարիք չունէ թելերի էլէկտրական հոսանք ղրկելու համար. դա պէտք է կատարէ օդը և միայն օդը։

Անցեալ օր, ասում է «New-York Journal», Տեսլայի լաբորատորիայում մի թելէ կծիկ մօտեցրին այդ մեքենային, որը 1500 մոմի հաւասար լոյս տւեց։

Մէկը հարցրել է Տեսլայից, թէ նրա գիւտերը ինչի կարող են ծառայել. պատասխանը իսկոյն և եթ ստացաւ։

«Նրանք ցոյց են տալու էլէկտրական ոյժը, եթէ խոշոր է նրանց տւած գումարը, արդիւնքը, այն ատեն, կարող կլինեն ապահովել հաղորդակցութիւնը, առանց թելերի գործածութեան երկրագնդի բոլոր կողմերի հետ։ Փորձերը ցոյց տւին, որ մեքենաները կարող կլինեն կառավարել ինչ հեռաւորութեան վրայ էլ, որ լինէ, առանց որևէ տեսանելի կամ շօշափելի միացումների։

«Նրանք գործնականապէս ապացուցին սիկնալ տալու սիստեմի հետ, առանց թելերի։ Սա վերջերս գործ դրած մի թերի մերձեցում չէ, իմ ակնարկած ապարատը պիտի արտադրէ ամենաուժեղ օդային ծածանումներ և շրջաններ ճիշտ համաժամանակ, և որն արգելել անկարելի է։

«Իմ փորձերը ապացուցին, որ լոյսը տարաճւած, ինչպէս արեգակի լոյսը կարելի է ստանալ աւելի խնայողաբար, քան մինչև օրս յայտնի է. և այնպիսի լամպերով, որ երբէք չեն մաշւիլ կամ փճանալ»։

Պարոն Տեսլա ուզում է ասել, որ ուշ կամ վաղ պիտի հաստատւէ մի որևէ բարձունքի վրայ, մի յարմար տեղ այնտեղից էլէկտրական հոսանք տալու, այնքան ուժեղ, որ մինչև օրս դեռ չէ տեսնւած։ Ջատ հեռուն քաղաքներում պիտի օգտւին այդ ոյժից, պիտի լինին մեքենաներ այնպէս ուղղւած, որ պիտի կարողանան օդի միջով ստանալ ճիշտ այն քանակութեամբ ու չափով հոսանք, ինչ քանակութեամբ, որ պէտք ունին։

Այն ժամանակ այլևս չեն լինելու ոչ լոկոմատիւներ վագոնները քարշ տալու, ոչ քարշակներ և ոչ էլ էլէկտրական լոյսի համար թելեր, ոչ էլ լոյսի մեծ կամ փոքր կլոբներ, ոչ էլ խաչաձև ձգւած թելերից առաջացած հրդեհներ. չեն լինելու մութ փողոցներ։

Երկաթուղիների վագոնները և քարշակները պիտի առաջ մղեն ուղիղ օդի միջից եկած էլեկտրական հոսանքով։ Լուսավառութիւնը պիտի լինէ տարածւած, ինչպէս արեւի յոյսը։

Շոգու ուժը բոլորովին պիտի չնչէ, որովհետև օդից ստացւած էլեկտրականութիւնը պիտի լինի աւելի էժան, մաքուր և աւելի ազդու։

Մի երկիր իր էլեքտրական ոյժի կենդրոնական կայարանը կունենայ հաստատած մի բարձր լեռի գագաթին ոյժեր մատակարարելու համար։

Կասկած չկայ, թէ ինչքան բարոբութիւն կայ կախւած մարդկութեան և գիտութեան համար այս գիւտի աջողութիւնից։

Շառուբիւճ Շէֆէրճեան

ԼՈՒՐԵՐ

Պետերբուրգ, 29 յունիսի. Կայսերական պալատի մինիստրի հաղորդագրութիւնը։ Յունիսի 28-ին առաւօտ. ժամի 9-ի 25 րոպէին Աբրաքսումացում ի տէր հանգեաւ Թագաժառանգ Ցեսարեւիչ եւ Մեծ Իշխան Գիորգի Ալէքսանդրովիչ։ Նորին Բարձրութեան մարնը առաջացաւ կոկորդից սաստիկ արիւնհոսութեան պատճառով։ Չհամայած է Բարձրագոյն պալատում երեք ամիս սուգ պահել։

Ելեքշաբթի, յունիսի 29-ին առաւօտեան ժամի 11 ին Սիօնի Մայր տաճարում, առաւօտեան ժամերգութիւնից յետոյ, կատարեց ի տէր հանգեալ *Թագաժառանգ Ցեսարեւիչը* առաջին հոգեհանգիստը։ Հոգեհանգիստը կատարեց վրաստանի էկզարխ Փլաւիան, ամբողջ ուղղափառ հոգևորականութեան հետ միասին։ Հոգեհանգստին ներկայ էին բոլոր Թիֆլիսում գտնուղ գեներալիտետը, քաղաքացիական առանձին բաժինների կառավարիչները, օտար պետութիւնների հիւպատոսները։ Միևնոյն Սիօնի տաճարում կատարւել է հանգուցեալ Թագաժառանգի հոգեհանգիստը յունիսի 29-ին երեկոյեան ժամի 8-ին, 30-ին առաւօտեան ժամի 11-ին և երեկոյեան ժամի 8-ին. յուլիսի 1-ին առաւօտեան ժամի 11-ին. 1-ին կատարւած հոգեհանգստին ներկայ էր Կովկասի կառավարչապետի օգնական Ա. Ա. Փրեզէ, որը ժամանեց Թիֆլիս Կոջորից յունիսի 30-ին երեկոյեան։

Յունիսի 30-ին առաւօտեան ժամի 11-ին Թիֆլիսի Հայոց Վանքի Մայր եկեղեցումն էլ կատարւեց ի տէր հանգեալ Թագաժառանգ Ցեսարեւիչի հոգեհանգիստը։ Հոգեհանգիստը կատարել է Թեմական առաջնորդ Գէորգ Սուրենեանն ամբողջ Թիֆլիսի Հայ հոգևորականների հետ։ Սրբազան առաջնորդը այդ օրն էր եկել Կոջորից. եկեղեցում աղօթողների ահագին բազմութիւն կար։

Թագաժառանգ Ցեսարեւիչի մահուան առիթով Թիֆլիսում կատարւեցին հոգեհանգիստներ յունիսի 29-ին և 30-ին բոլոր ուղղափառ, Հայ-լուսաւորչականների, կաթոլիկների եկեղեցիներում և բողոքականների ժողովարանում, ինչպէս և մէչիտներում և սինագոգաններում։

Քաղաքի բոլոր տների, փողոցների վրայ յունիսի 29-ից երևում են սգոյ դրօշակներ։

Թիֆլիսի քաղաքային դումայի պահլճում, իրաւասուների ներկայութեամբ, կատարւեց ի տէր հանգեալ Թագաժառանգ Գէօրգի Ալէքսանդրովիչի հոգեհանգիստը։

«Աբրաքումանը խորին սգի մէջ է ընկղմած Թագաժառանգ Ցեսարեւիչի մահուան պատճառով։ Աբրաքուման եկան՝ Կովկասի կառավարչապետ գեներալ-ադիւտանտ Իշխան Գոլիցին, կառավարչապետի դիւանատան դիրեկտոր Սանդրիգայլօ, Կովկասեան զինուորական շրջանի գլխաւոր գեներալ-մայոր Բէլաւսկի, Թիֆլիսի նահանգապետի պաշտօնակատար գնդապետ Սէէչին, Իշխան կառավարչապետի մօտ առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ Իշխան Կուրակին, նորին Մեծութեան պալատի եգերմէյստէրները՝ Իշխան Ջերաշիձէ և նահանգական ազնուականութեան պարագլուխ Իշխ. Բագրատիօն-Մուխրանսկի։ Սպասւում են և Վրաստանի էկզարխն ու բազմաթիւ պատգամաւորութիւններ։ Յունիսի 30-ին, առաւօտեան 11 ժ., նորին Կայսերական Բարձրութիւն Թագաժառանգ Ցեսարեւիչի վախճանելու տեղի վրայ խաչ դրուեց և Հոգեհանգիստ կատարւեց։ Հոգեհանգստին ներկայ էին՝ Մեծ Իշխան Նիկոլայ Միխայլովիչ, պալատական բժիշկ Այկոպով, Բոյսման, Իշխան Ջերաշիձէ, զինուորական և քաղաքացիական վարչութիւնների պաշտօնեաները և Հազարաւոր գլուղացիներ, որոնք լաց էին լինում և ծնկաչոք աղօթում էին ի սէր հանգուցեալ Թագաժառանգ Ցեսարեւիչի համար։ Այդօրւանից ամեն օր, երկուսից մինչև վեց ժամը, թոյլ է տրւում ժողովրդին մտնել պալատ՝ Ցեսարեւիչի նշխարքին երկրպագելու համար։ Ցեսարեւիչը նաւատորմային համազգեստ ունի հագած և դրած է ժամանակաւոր մետալական դագաղում։ Օր ու գիշեր դագաղի մօտ քահանաները կարդում են ս. աւետարանը։ Երեկոյեան 7 ժամին պալատում հոգեհանգիստ կատարւեց։ Հոգեհանգստին ներկայ էին՝ Մեծ

Իշխան Նիկոլայ Միխայլովիչ, Կովկասի կառավարչապետ իշխան Դոլգիին, նահանգապետի պաշտօնակատար Սվէչին, իշխան Ջերաշիձէ, իշխան Մուխրանսկի, շտաբի գլխաւոր Բէլեաւսկի, կառավարչապետի դիւանատան դիրեկտոր Պոնոբիգայլօ, Ցեսարև իչի և կառավարչապետի շքախմբի անձինք, քաղաքացիական և զինուորական վարչութիւնների պաշտօնեաներ, և մամուլի ներկայացուցիչներ։ Յուլիսի 5-ին Պետերբուրգից սպասւում են պալատական անձինք»։

Кавказъ

—

Թիֆլիսի քաղաքային դումայի վերջին նիստում, յունիսի 30-ին, բազաքագլխի պաշտօնակատար Մ. Ջեստակով արտասանեց հետևեալ ճառը. «Պարոններ, այսօր ինձ է վիճակւել ծանրը պարտաւորութիւնը կրկնելու այն սարսափելի լուրը, թէ Նորին Կայսերական Հարձրութիւն Թագաժառանգ և Մեծ Իշխան Գիւորգի Ալէքսանդրովիչ ի Տէր հանգեաւ յունիսի 28-ին, ժամը 9½-ին, Աբասթուման աւանում։ Այդ նշանաւոր եղելութիւնը խոր վշտով խոցեց մեր ընդարձագոյն հայրենիքի հպատակներին։ Ներկայ վշտագին րոպէն պահանջում է համապատասխան գործեր, ուստի առաջարկում եմ դումային ի յարգանս և անսահման սէր դէպի հանգուցեալը տալ ինձ լիազօրութիւն, նախ՝ արկանել առոտս Նորին Կայսերական Մեծութիւնների՝ Թագաւոր Կայսրի և Մայր Թագուհի Կայսրուհի Թիֆլիս քաղաքի ազգաբնակութեան խորին վշտի ըզգացմունքները հայրենիքին հասած կորստի առիթով. երկրորդ՝ դնել Թիֆլիս քաղաքի անունից պսակ. երրորդ՝ այսօրւայ հերթական նիստի համար նշանակած պարապմունքները յետաձգել և նուիրել այդ ժամանակը հանգուցեալ Թագաժառանգի հոգու հանգստութեան ազօթքներին, խընդրելով մխիթարութիւն Մայր Կայսրուհու համար՝ տանելու խոր վիշտը և չորրորդ՝ ներկայ որոշումը ի կատար ածել առանց սպասելու օրագրի ստորագրութեան»։ Դուման ոտքի կանգնած լսեց քաղաքագլխի պաշտօնակատարի առաջարկութիւնը և միաձայն ընդունեց։

—

«Тифл. Лист»-ին Աբասթումանից հեռագրում են յուլիսի 1-ից. «Մեծ Իշխան Նիկոլայ Միխայլովիչին հարձրագոյն հրամայւած է ուղեկցել ի տէր հանգուցեալ Թագաժառանգի աճիւնին, Բաթումի վրայով, դէպի Պետերբուրգ։ Յունիսի 30-ին առաւօտեան մահւան տեղում ազօթք արեց Կովկասի Իշխ. Կառավարչապետը։ Պաշտօնական հոգեհանգիստներ ամեն օր կատարում է Ցեսարևիչի խոստովանահայր Րուդնեվ շրջակայ դիւղերի Ծխական քահանաների հետ, առաւօտեան ժամի 11 ին և երեկոեան 7 ժամին այստեղ գտնւած իշխանութիւնների ներկայութեամբ։ Այսօր առաւօտեան 11 ժամին, Ցեսարևիչի վախճանման տեղի վրայ հայոց հոգևորականութիւնը կատարեց ընդհանուր հոգեհանգիստ։ Վախճանման տեղը, պարզարւած կենդանի ծաղիկներով, ազօթատեղի է գարձել տեղական բոլոր շրջակայ բնակիչների և եկուորների համար։ Ընդհանութեան կողմից ներկայացուցիչներ են գալիս։ Այսօր եկաւ գեն. ադիւտ. իշխ. Ճաւճաւձէ։ Հիւրանոցները լի են։ Եկած են Кавказъ-ի, Изв. Обозр.-ի, Тифл. Лист.-ի, «Իէերիայի», «Տարազի», «Церк. Вест.»-ի և «Մշակի» թղթակիցները»։

—

Հէլսինգֆորսից յունիսի 25-ից Ռ. Տ. Գ. հեռագրում է. «Այստեղի լրագիրների մէջ յայտարարւած է, որ փետրւարի 3-ի մանիֆէստի առթիւ Ֆինն ժողովրդի ուղերձի մասին հերքարտուղարի տւած զեկուցման վրայ Նորին Կայսերական Մեծութիւնը հաճել է սեպհական ձեռքով մակագրել. «Ուղերձը բողնում եմ անհետեւանք. խնդիրը գոնում եմ անհեղի, որովհետեւ մանիֆեստը վերաբերւում է ընդհանուր պետական եւ ոչ թէ տեղական օրենսդրութեան»։

—

Ներքին գործերի, ժողովրդական լուսաւորութեան և արդարադատութեան մինիստրները և ս. Սինոդի օբէր-պրոկուրորը վճռեցին կատարելապէս դադարեցնել «Нива» ամսագրի հրատարակութիւնը, որ լոյս ևր տեսնում Պետերբուրգում։

—

Ի նկատի ունենալով, որ Россія լրագիրը իր № 56-ում խախտել է մամուլի գլխաւոր վարչութեան 1896 թւի յունիսի 9-ի կարգադրութիւնը, ներքին գործերի մինիստրը որոշեց արգելել այդ լրագրի հատով ծախելը։

—

Օդեսայում գրականութեամբ պարապողների համար ապաստարան հիմնելու գործի առիթով ժողովւած է 31,000 րուբլի։ Վերջերս տեղի ունեցաւ ապաստարանի բացումը. նուիրատուութիւնները շարունակւում են։

Որքան կարևոր են այդպիսի ապաստարաններ և մեր Կովկասի գրական գործիչների համար, որտեղ առանց ազգի խտրութեան վաթսար դրութեան մէջ են շատ գրական գործիչներ։

—

Կովկասի տնային կենդանիների, բոյսերի, գիւղատնտեսական շինութիւնների լուսանկարները պատրաստելու նպատակով երկրագործական մինիստրութեան պաշտօնեաներից մէկը՝ Զաճեհս, ներկայումս ճանապարհորդում է Կովկասի գանազան մասերում և հանում լուսանկարներ։

—

Արդւինի և Բաթումի շրջաններում առանձին ռուս գաղթականութիւններ հիմնելու հարցը վճռւած է դրական մտքով և այժմեանից կորուշի, թէ ինչ տեղեր պիտի յատկացնելին յիշեալ գաղթականութիւնների համար։

—

Անդրկովկասում առաջիկայում կը հիմնւի մի խոշոր հիմնարկութիւն էլէկտրական ոյժի գործադրութեան համար։ Հիմնական դրամագլուխը սահմանւած է 4 միլիոն րուբլի, բաժանւած 16,000 ակցիայի, իւրաքանչիւրը 250 րուբլի արժողութեամբ։

—

Բագուի վաճառականները նաւթարդիւնաբերական մի նոր ընկերութիւն են հիմնում Գ. Մ. Առաֆելեան եւ ընկ. Բագուի նահանգի նաւթային աղբիւրները շահագործելու համար։

—

Մշակը հաղորդում է, որ Պարսկաստանում ժանտախտ կայ, այսպէս Բուշիրում մայիսի 26-ից մինչև յունիսի 18-ը մեռել են ժանտախտից 40 հոգի։

—

Յունիսի 26-ին, առաւօտեան ժամի 5 ին Բագուի նահանգական բանտի գաղտնի սենեակում մեռած գտան յայտնի նաւթարդիւնաբերող Բիլսկուն։ Նա կախել էր իր գօտիով։

—

Յունիսի 24-ին դրուեց Ջալալօղլում եկեղեցական-ծխական դպրոցի շինութեան հիմքը։

—

Այս տարի Երևանի նահանգում հունձը անբաւարար է, բացի բամբակից, որը առայժմ լաւ դրութեան մէջ է համարւում։

—

Պարիզի համաշխարհային ցուցահանդէսի մէջ ռուսական բաժնին մասնակցելու են մօտ 1,300 էքսպոնատներ։

—

Թիֆլիսի վաճառականների կազմած նաւթարդիւնագործական ակցիօներական ընկերութեան գրամագլուխն է 75),000 ր., բաժանած 3),(0 ակցիայի, իւրաքանչիւրը 250 արժողութեամբ։

Նոր ստացած գրքեր

—

1. «Փիւան հայոց պատմութեան» գիրք դ. Ղուկաս կաթուղիկոս (1780—1800) Ցառաջաբանով, յաւելուածներով և ծանօթութիւններով։ Հրատարակեց Գիւտ աւագ. քահ. Աղանեանց։ Ղուկաս կաթուղիկոսի մի լուսանկար պատկերով և մի վիմատիպ կոնդակով։ Մեծադիր, 799 երկիջեան երես. գինը 4 րուբլի։

2. «Թատրոն», գրական և թատերական հանդէս. երրորդ տարի, № 1. բովանդակութիւնն է ա. Սրաբիոն Հէքիմեան, կենսագր. Ա. Այվազեան, բ. Երաշխիք, Պոլիկրատէսի մատանին Շիլլերից, թարգ. Յ. Յովհաննիսեան, գ. Լէգի Փրուաք, մի ուսումնասիրութիւն Շէքսպիրի «Մակբեթի» Փիչարդ Գրանտ Ուայտից. Յ. Խ. Մասեհեան, դ. Սիրոյ տեսիլներ. բանաստ. Յովհ. Թումանեան, ե. Պարսկական թատրոնը, Վ. Փափազեան, զ. Օրօր, էլեգիա և պիշեր—բանաստեղծութիւններ, Գ. Մոնոռեան, է. Բեմական ըզգեստ, Թատեռասեր, ը. Թովմաս Սալւինի, թարգմ. Ա. Թաւխանեան, թ. Յ'պահանչ, գրոյց Գ. Մուրացան, ժ. Հայերիտասարդ. † Ռ. Պատկանեան, ժա. Օսկան Պետրովիչն էն կինքումը, կատակ. մէկ արարածով. Հեղինակութիւն Գ. Սունդուկեանցի, ժբ. Նկատողութիւններ կեանքի մասին, քաղուածք Արիոնս Դոգէից. Ս. Չախումեան, ժգ. Նէէր Գ. Պռօշեանցին. Յ. Յովհաննիսեան, ժդ. Թատրոնական քրոնիկոն, Դիլեսանս։

Թատրոնի այս գիրքը, որ իր սկզբնաւորութեան օրից թիւով Ը-ն է, բաւականին լաւ է և թողնում է տպաւորութիւն, մանաւանդ իր շքեղ, մաքուր տպագրութեամբ։ Չնդիսի տարեկան բաժանորդագինն է 3 ր. Թիֆլիսում, օտար քաղաքներում 3 ր. 30 կոպ.։ Սոյն թուականի № 2-դը լոյս կըտեսնի հոկտեմբերի վերջին։

3. «Հանասեղծութիւններ»—Դերենիկ Դիմիրճեանի։ Հրատարակութիւն Երանուհի Տէր-Գրիգորեանի։ Տպագրած է հաստ, լաւ թղթի վրայ. սակայն տպագրութիւնն անճաշակ է։ Գինը 25 կոպէկ է։

4. «Schahnaz». Ballade Persane, pour le violor avec accompagnement de piano arragee et transcrite par Nicolas Tigranóff։

Պ. Ն. Տիգրանեանի այս նոր աշխատութիւնը՝ Շահնազ՝ նոյն լաւ ընդունելութիւնը կըգտնի, ինչպէս նրա նախկին աշխատութիւնները։ Գինը 40 կոպէկ է։

5. «Մկրճի ապահարզանը», Փարս-վոդէվիլ մի գործողութեամբ, հեղինակութիւն Ալէքս. Աբելեանցի։

Այս Փարս-վոդէվիլը, որ մի քանի անգամ խաղացել է մեր բեմի վրայ, շատ չաջող է անցել։ Փոքրագիր է, 78 երես, գինը 20 կոպ.։

6. «Այժեր», կազմեցին Ս. Չիլինկարեան և Տ. Ռշմաճեան։ Այս գրքոյկը չիշեալ պարոնների ձեռնարկած բնագիտական ժողովրդական գրադարան անունով ձեռնարկութեան չորրորդ գիրքն է։ Միջադիր է, 60 երես, գինը 8 կ., որ շատ արժան կարելի է համարել։

7. «Իսլամ», պատմական պատկերազարդ տեսութիւն Ե. Թոփչեանի։ Այս գրուածքը, որ առաջ մաս մաս տպւում էր «Տարազում», բաւական սմփոփ գաղափար է տալիս մահմեդական կրօնի—իսլամի մասին։ Միջադիր է, 78 էջ, գինը 30 կոպ.։

Նամակներ խմբագրութեան

I

Յարգելի խմբագիր.

Ներկայ տարւայ № 18 **Տարազի** իմ հասցէի տակ նրանդակում ասւած էր. „Թուք զարմանք էք յայտնում... որ „**Արտա բազաւոր**“ աւանդութիւնը այժմս էլ արտատպած է տեսնում **Արեւմտում** առանց մի խօսք անգամ այս մասին չիշատակելու։ Պարտք ենք համարում ձեզ զեկուցանել, որ մեր կողմից էլ այս մասին համաձայնութիւն չէ տուել **Արեւմտը**, սակայն չարժէ այդպիսի վարմունքների վրայ ուշադրութիւն դարձնել“։

Երևի խմբագրութիւնդ իմ գրած նամակի հիման վրայ արել է այս դիտողութիւնը։ Ահա թէ գործն ինչպէս է եղել։ 1893 թ.ին՝ երբ չանձնած էի խմբագրութիւնը պ. պ. Լիսիցեանին և Մրզոյեանին՝ ես նրանց չանձնեցի մի քանի նիւթեր, ընդ որս և **Արտա բազաւորը**։

Պ. Ս. Լիսիցեանն իբրև իմ քարեկամը, այդ նիւթերը պահել էր իր մօտ, ուստի չիշեալ պարոնը առանց գիտենալու՝ որ նոյն բանը 1895 թ.ին **Տարազում** տպագրել եմ, չանձնել է **Արեւմի** խմբագրութեան, որ և տպագրել է։

Արդ այս միջադէպում չանցաւորն իմ չիշողութիւնն է, ոչ թէ պ. Ջալալեանը։

Սէյլան

II

Մարաղա. 99 թ. յունիսի 18-ին.

Երկին անգամ յայտարարում ենք մեր գիտութիւն հայ հասարակութեան՝ որ Մարաղայի հայոց գրադարան-ընթերցարանը միանգամայն կանոնաւորել և անխափան շարունակւում է։ Պիտում ու խնդրում ենք հայ ազգի յառաջադիմութեան — զարգացման նախանձախնդիր հեղինակներին, խմբագրերին, հրատարակիչներին և այլն՝ որ չըզլանան իրանց նուիրատուութեամբ օժանդակել, զարկ տալ մեր սկսած բարեսպատակ ձեռնարկութեանը, մի գործ՝ որի մէջ է կայանում մի ամբողջ ժողովուրդի բարոյա-մտաւորական քախտը. մի ժողովուրդ՝ որը խարխափում է դարաւոր խաւարի մէջ. և որ արդէն հասած է մի կորստեան վիհի եզրը... Թող ամեն մի բարեխիղճ հայ ձեռք կառկառէ ու ազատէ այդ մահաբեր վիհից։

Ի դէպ. խորին շնորհակալութիւնները ենք յայտնում պ. պ. Բերբերեանին, Սապահ-Գիւլեանին, Ծոցիկեանին, Սարուբէգեանին և տեղիս մի քանի երիտասարդներին, որոնք 50-ի չափ գրքեր նուիրած են գրադարանիս։

Մեր որոշ և ապահով հասցէն՝

Bibliothéque Armeniénne Maragha (Perse)։

Ի դիմաց վարչութեան-նախագահ՝

Մարգար Տէր-Յակոբեան

Գիտական նորութիւններ

1898 թ. լոռեցի Լևոն Խան-Ազեանը մի նշանաւոր գիւտ արաւ։ Մոնգոլֆիերի Տարան անունով ջրաբաշխական մեքենան ենթարկելով հիմնական փոփոխութիւնների, դարձրեց բոլորովին պարզ մի մեքենայ, որ միաժամանակ անհամեմատ աւելի մեծ քանակութեամբ ջուր է տալիս։ Պ. Խան-Ազեանի այս գիւտը մեծ բարերարութիւն է մանաւորապէս մեր երկրի համար, որ սրընթաց գետերի ափերին այնքան անգործ ու անջուր ընկած հողեր ունի։ Հաւական է այդ մեքենան դնել գետի ափին, խողովակները դուրս հանել, և 20 սաժէն խորութիւնից կարելի է ջուրը դուրս հանել ագարակներ, արտեր, պարտէզներ ջրելու, տնային գործածութեան համար և այլն, նայած թէ որ №ի մեքենայ է դրած։ Մինչև այսօր Մոնգոլֆիերի ամենակատարելագործած մեքենայի մեծ №-ը համապատասխանում է Խան-Ազեանի № 4 կամ 5-ին, որոնք տալիս են օրական 5000 վեդրօ ջուր։ Խան-Ազեանը յաջողեցրել է և № 10, որ տալիս է օրական 43,000 վեդրոյից աւելի ջուր։ Մենք մանրամասն տեղեկութիւններ կըտանք այս շատ կարևոր մեքենայի մասին։

Խառն լուրեր

Ջմիւռնիայից ստացած տեղեկութիւններից երևում է, որ այդ քաղաքը միշտ երկիւղի մէջ է կրէտէից գաղթած մահմեդականների ներկայութեան պատճառով, որոնք քաղաքի շրջակայքում 23,000 մարդով բանակ ունեն դրած։

—Տարազի նախորդ №-ում գրել էինք հարաւային Չնգկաստանում բարձրացած ապստամբութեան մասին. հիմա պաշտօնական հաշիւներից երևում է, որ Սիվակազի քաղաքի վրայ յարձակելիս 887 տուն այրել են, 25 մարդ սպանել, 6 վիրաւորել և 38 մարդ ձերբակալել։ Ընդհանրապէս մեղադրւում են 900 մարդ. անգլիական կառավարութիւնը ուղարկեց ապստամբութեան տեղը 9 եւրոպական սպաների հետ 300 զինուորներ, 5 տարի ժամանակով, կարգը պահպանելու համար։

—Բելգրադից հեռագրում են. «Միլան Օբրենովիչը բաց կառքով անցնելիս մի մարդ յարձակւեց և չորս անգամ ատրճանակ արձակեց։ Միլանը վիրաւորւեց մէջքից։ Նրա կեանքի դէմ փորձ անողը բոսնեացի է Պուրա Կնեաժևիչ անունով. քննութիւնից երևաց, որ յանցաւորը կամենում էր անձնասպանութիւն գործել։ Բայց երբ չըյաջողւեց, ընկաւ Սաւա գետը, սակայն այնտեղից էլ հանեցին նրան։ Ձերբակալւած են 14 արմատականներ, նախկին արմատական կենդրոնական կոմիտետի անդամները։ Դրանց թւումն են նախկին միևիստր նախագահ Կիստա Տաուջանովիչ, փաստաբան Ժիվկովիչ, Օսիեճ արմատական օրգանի նախկին սեպհականատէր Ստոյեան Պրոտիչ, փոխ գնդապետ Վլատան Նիկոլիչ, և այլն։ Նախկին միևիստր նախագահ Պաշիչը նոյնպէս ձերբակալւել է։

Միլանը շատ առողջ է»։

—Դրէյֆուսի փաստաբանները՝ Լաբորի և Դեմանժ պահանջում են, որ նրա գործի քննութիւնը նշանակւի մինչև յուլիսի 19-ը (31)։ Նրանց կարծիքով, եթէ բորդերօ՛ի հարցն է լինելու քննութեան առարկայ, այն ժամանակ գատը կըվերջանայ երեք օրում, իսկ եթէ ուրիշ հարցեր յարուցւեն, այն ժամանակ կարող է տևել մինչև երեք շաբաթ։

Դրէյֆուսի մտաւոր ընդունակութիւնները թէև թոյլ են, սակայն առ ժամանակից յետոյ յոյս կայ, որ բոլորովին նա կըկազդուրւի և կարող կըլինի իր գործը պաշտպանել։

—Բելգրադում և նրա շրջակայքում պաշարման գրութիւն է յայտարարւած։ Այդ միջոցը ձեռք է առնւած այն մերկացումների պատճառով, որ երեւաց Միլանի կեանքի դէմ փորձ անելու մասին արած քննութիւնից։ Պաշարման գրութիւնը կըտարածւի և Միլանի կեանքի դէմ փորձ անելու առիթով կալանաւորւած անձանց վրայ։

ՁԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

Մայրաքաղաքի թերթերը հաղորդում են, որ ճանապարհների հաղորդակցութիւնը վճռել է փոխել պետական երկաթուղիների վրայ թոյլ ոյժ ունեցող վեց ակն ունեցող կաթսաները ութ ակերի։

Այլ եւ այլք

Ամերիկացիների պատկառութիւնը։ Տարօրինակ ամերիկացիք սիրում են ամեն կերպ փոխել պոռկի կարգը և Ամերիկայում ամեն մի մտաղրութիւն հեշտ իրագործելի է, որովհետև երկրի օրէնքները շատ քիչ բան են պահանջում պատկառներից. նրանք պարտաւոր են միայն յայտնել որևէ մի հաշտարար գատաւորի կամ մի որևէ աղանդի հոգևորականին պռկի մասին մտահանութեան մտածելու համար, նախապէս վճարելով որոշեալ գումարը և ամուսնութիւնը կըհամարւի օրինաւոր։ Ամերիկայում պռկը կատարւում է նաև հեռագրով և այդպիսի դէպքեր այնտեղ պատահել են արդէն քսան տարի առաջ։ Պատահում է, որ մի որևէ տարփատենչ եանկի դիպչում է փոզոցում մի գեղեցիկ երիտասարդ օրիորդի, ականայ դիպչելու համար, ներողութեան փոխարէն մէկ ժամից յետոյ տանում է նրան եկեղեցի հետը պռակելու։ Պատահում է, որ եանկին ուղևորւում է պռակելու և պատահելով վերջին կայարանում իր առաջեայ սիրած կնոջը, գնում է նրա հետ եկեղեցի և տիպում է լուռը պսակել իր նոր հարսնացուին և հարսանիքի հրեշտին։ Վերջին ժամանակներում մեծ ընդունելութիւն ունի Ամերիկայում պռակը ձիանների վրայ։ Շատ յաճախ պատահել է այդ ժամանակ, որ երիտասարդ զոյգը խոկոյն պռակելուց յետոյ անյայտացել է բոլորովին, չըվճարելով հարսանիքի ծախսը և այժմ քահանաները, հարս ու փեսայի ձիանների վրայ պռակելիս, անպատճառ վերցնում են իրանց հետ լցրած ատրճանակը, որպէս զի եթէ փախչելու լինին, հարս ու փեսայի յետևից օրհնութիւն ուղարկելու փոխարէն գնդակ արձակեն։ Աւելի քիչ քնակութիւն ունեցող տեղերում, ուր չեն լինում եկեղեցի, շատ յաճախ կարելի է պռակահել լրագրներում այս տեսակ յայտարարութիւն, «պռակել է սուրբ հայր Մազոնը Վաշինգտոնի արեւելեան կէսում, վիճակի հիւսիս-արևմտեան 32 մասում, 21-դ քաղաքամասում, բաց սահնակներում, երկնքի տակ, արևմտա-հարաւ· արևմտեան քամու ժամանակ Կոլորադոյի բնակիչ Ջօն Կոկսին Բուր Կուն տոյացի Էլէն Լիդիա Փարբինգտոնի հետ Նիւ-Եօրկի կենդրոնում գտնւած այգում մէկ անգամ հարս ու փեսացուն պռակւեցան օդապարիկում։ Քահանան օրհնելուց յետոյ իջա-

օգապարիկից, իսկ նորապսակները բարձրացան աւելի վեր.: Հաւաքւած ամբոխը բուռն ծափահարութեան ուղեկցութեամբ: Մի քանի ամերիկացիք սիրում են պահել գեռնալորերում, 1881 թ-ին մի երիտասարդ զոյգ բարձրացաւ Կոլորադոյի մեծ սարերի գագաթներից մէկի վրայ և այնտեղ հեռագրով պահեց նրանց քահանան, որ գտնւում էր այդ բոպէին սարի ստորոտում: Հեշտութեամբ են կատարւում Ամերիկայում ամուսնութիւնները, բայց և շատ շուտ ապահարզան է տրւում: Օրինակ Օհիո նահանգում, 1882 թ. եղել է 4,500 ամուսնութիւն. նրանցից հէնց նոյն տարւայ մէջ ոյում ապահարզան է տւել 1800 հոգի:

Խմբագիր-Հրատարակիչ՝
Տիգրան Նազարեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վաճառւում են

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

1. Դաշնակներ. . . . . 15 կ.
2. Լօռեցր Սահօց (պօէմա) 10 կ.

Դիմել՝ Тифлисъ, Центральн. книжн. торговля.

ԱՏՐՊԵՏԻ

«Արմաս» վէպ բարձր-հայոց կեանքից. գինն է. . . . 2 ր.
«Խեւ-Կառապետ» վէպ հայկաթոլիկների կեանքից . . . . 1 ր.
«Քոռ Եղիկ» վէպ հին կեանքից. . . . . 30 կ.
Ջիանոց վ.պ Սագի գիւղացիների (Թբ.քահայերի) իրական կեանքից . . . . . 30 կ.
Ժառանգներ Ղրի գաւառի (Թբրքահայերի, կեանքից. . 30 կ.
«Զուռնա» ողբերգ. օպերայի համար Թիւրքահայոց կեանքից . 1 ր
«Սարոփ» ողբերգութիւն տաճկ. պատ. կեանքից . . . . 30 կ.
Ռէհսայի Առաքելը Թրքահայերի կեանքից . . . . 30 կ.

Դիմել Թիֆլիսի Կենսոռնական Գրաւաճառանոցին եւ Կովկասի բազմաթիւ հայ գրավաճառներին:

Գրավաճառները կարող են դիմել ընդ նմին. Въ Нахичеванѣ н-Д., въ Типографію Бр. Аваковыхъ, отдѣленіе "Кругозоръ" отдѣленіе:

25—8.

Լոյս տեսաւ

Ե. ԹՈՓՉԵԱՆԻ

ԻՍԼԱՄ

Պատկերազարդ պատմական տետրիւն

Գինը 30 կոպ.

ԱՂԲԻՒՐԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Գ. Գոշգարեանց

ԵԶԻԴԻ ՄԿՐՏՉՈՂՆ ՑՈՒՆԱՑ

Փառաւոր գինը 50 կ.

Լոյս է տեսել

Վ. Փափազեանց

Աղբիւրի Մատենադարան

I

ՀԱՅ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՎՐԱՆՆԵՐՈՒՄ

II

ԱՌԻՒԾԻ ՄԱՀԸ

Փառակազմ գինը 50 կ.

ԳԵՐԱԽՏ ԲԼՈՒՆՏ

ԱՂԲԻՒՐԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Յովհաննէս Թումանեանց

ԲԱՆՊՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ և ՊԱՏՄՒԱԾ

Փառակազմ գինը 50 կ.

Լոյս տեսաւ

ԳԻՒՈՒՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Գիւտ Դ.

Ղուկաս Կաթուղիկոս

յառաջաբանով, յաւելուածներով և ծանօթութիւններով հրատարակեց Գիւտ ա. քհ. Ազանեանց (մի լուսանկար վիմատիպ կոնդակով):

Գինն է 4 ռուբլի

Առաջիկայ յուլիսի 1-ին լոյս կըտեսնի 1899 թ. Լուսոյ հանդիսի II գիրքը: 3—3

ԹԻՖԼ. Տ. ՀՐԱՏ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1899-ին լոյս են տեսել

153. Ֆեսսիկայի Առաջին Աղօթքը. *Թարգմ. Պետր Պալօեանի.* 20 կ.
154. Երիտասարդ անգլիացի. *Հաւտքի. թարգ. Օր. Ե. Տ.-Ն.* 05 կ.
155. Հին Հայ Աբգեր, Հաւքի. *Թարգ. օր. Ե. Տ.—Ն.* . . . 63 կ.
156. Սեբէոսի պատմութիւնը և Մովս. Խորենացի. **Սպ. Մալխասեանց** . . . . 40 կ.

Դիմել՝ Тифлисъ, Тифлисское Общество Изданія Армянскихъ книгъ, կամ Tiflis (Russie) Société de la Publication des livres arméniens. 8—7

Հոյս տեսաւ

ՉԻՐՎԱՆԶԱԴԵԻ

ՔԱՕՍ

վէպը

Գինն է 1 ր. 50 կոպ.

Ճանապարհածախսով 1 ր. 75 կոպ.

Գրավաճառներին զեղջ.

10 մինչև 20 օրինակի համար			15 %
20 — 30	„	„	20 %
30 — 50	„	„	25 %
50-ից աւելի			30 %

Առանց նախապարհածախսի.

Դիմել. Въ г. Баку. Типографія «АРОРЪ». 10—6

Սարաթ 15-ից բացւած է

ԻՄ. Ա. Ֆ. ԱՐՂՈՒԹԵԱՆ-ՆԿԱՉՆԱՐԱԶՈՒԿԻ

սեպհական այգիներից

ԲԱՅԱԹԱՊԷՍ

Կ. Ա. Ի. Է Թ Ի Գ Ի Ն Ե Ր Ի

ՊԱՀԵՍՏ

Պահեստը գտնւում է Օրբելեան փողոցի եւ Սոլդատսկի բազարի անկիւնում, Քարտիրոսեանցի նոր տանը: Արժէքը՝ ըիշը 15 կոպէկից մինչև 1 ր. 50 կ., վեդրոն 2 ր. մինչև 20 ր. 10—10

Լոյս տեսաւ

3. Պատոմեանի երկասիրութիւնները

Ա. Ծիծաղ. հեղինակի պատկերով. գինն է 1 ր. 25 կ.

Բ. Արեւելեան ատամնաբոյժ. գինն է 50 կ. գումարով գնողին զիջումն.

Հրատարակիչ՝ Գիւտ Ա. Ֆաճ. Ազանեանց. 5—5

Деш. денз. Тифлисъ, 3-го іюля 1899 г. Տպարան Կ. Մարտիրոսեանցի Тип К. И. Мартиросіанца Орбел. ул., № 1—2.